ԽՈՍՔ ԹԱՐԳՄԱՆՉԻ

Հայր Մաթա ալ-Միսքինը[1] (1919-2006 թթ.) Ղպտի Ուղղափառ Եկեղեցու հոգեւորական է, եղել է Ս. Մակար Մեծի մենաստանի վանահայրը: Նա արդի աստվածաբանական մտքի նշանավոր ներկայացուցիչներից է՝ գնահատված ողջ քրիստոնեական աշխարհում: Հայր Մաթա ալ-Միսքինի աստվածաբանությունը հստակ հիմնված է Սուրբ Գրքի եւ եկեղեցական հայրերի գրվածքների վրա: Նրա ուսուցումները տեսական աստվածաբանությունից առաջնորդում են դեպի հոգեւոր կյանք:

Հայր Մաթա ալ-Միսքինը ծնվել է Նեղոսի Դելտայի Բենհա քաղաքում՝ ապահովված ընտանիքում: Մկրտվել է Յուսուֆ Իսքանդեր անունով: 1944 թ. ավարտում է Կահիրեի համալսարանի դեղագիտության բաժինը: Համալսարանն ավարտելուց հետո զինվորական ծառայության է նշանակվում պետական հիվանդանոցներում: 1948 թ. Հայր Մաթան վաճառում է իր դեղատունը եւ մեկնում Ս. Սամուել Խոստովանողի մենաստան, որը Վերին Եգիպտոսում՝ Ֆայումի հարավում գտնվող վանքերից ամենաաղքատն էր. այստեղ նա ընդունում է Մաթա ալ-Միսքին՝ Մատթեոս Աղքատ[2] անունը: Հայր Մաթան Ղպտի Ուղղափառ Եկեղեցու առաջին վանականն էր, որ ուներ բարձրագույն կրթություն:

Շուրջ մեկ տասնամյակ Հայր Մաթա ալ-Միսքինն ապրում է ճգնակեցությամբ, սակայն մինչեւ 1960 թ. նրան է միանում եւս յոթ վանական, մինչեւ 1964 թ. վանականների թիվը հասնում է տասներկուսի: Վադի Ռայան անապատը, որտեղ նրանք ապրում էին, ամբողջությամբ կտրված էր արտաքին աշխարհից:

Ըստ Հայր Մաթայի՝ վանականության երկու՝ համայնքային եւ մենակեցական ձեւերն էլ ընդունելի էին, սակայն նա նախընտրում էր մենակեցությունը:

Ի պատասխան Կյուրեղ Զ. Ալեքսանդրացու[3] խնդրանքի՝ 1969 թ. Հայր Մաթան եւ տասներկու վանականները տեղափոխվում են Վադի ալ-Նատրուն[4]՝

---

[1] Արաբ.՝ أبونا , կիրառվում է ասորիների եւ ղպտիների կողմից՝ հոգեւորականին դիմելիս:

[2] Հաշվի առնելով, որ այդ մենաստանում արդեն կար Մատթեոս անունով միաբան, նրա համար ընտրում են դեռեւս Ը. դարում ապրած վանական Ս. Մատթեոս Աղքատի անունը:

[3] Կյուրեղ Զ. Ալեքսանդրացի (1902-1971 թթ.)՝ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու 116-րդ Պատրիարքը, գահակալել է 1959-1971 թթ.:

[4] Հովիտ Լիբիական անապատի հյուսիս-արեւելքում՝ Եգիպտոսի Բուհեյրա նահանգում:

զարգացնելու կործանման եզրին գտնվող Ս. Մակար Մեծի մենաստանը: Այստեղ ապրում էր ընդամենը վեց ծեր վանական: Հայր Մաթան եւ տասներկու վանականները հոգ են տանում վերջիններիս մասին եւ վերակառուցում մենաստանը: Այսպիսով, սկսվում է մենաստանի եւ նյութական, եւ հոգեւոր վերակենդանացումը:

1971 թ. մենաստանում արդեն բնակվում էր երեսուն վանական, մինչեւ 1981 թ.՝ ութսուն, իսկ 1991 թ.՝ շուրջ հարյուր: Այսօր մենաստանում բնակվում է հարյուր քսան վանական, որոնց մեծ մասն ունի բարձրագույն կրթություն:

1980-ական թթ. Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթը նրանց է տրամադրում երկու հազար հեկտար ամայի հող եւ տեխնիկա: Կառուցվում է նոր ջրհոր: Մենաստանն այժմ ունի տպագրատուն, որտեղ տպագրվում են նաեւ Հայր Մաթայի գրքերն ու հոդվածները:

Մինչ օրս նա հրատարակել է կյանքի տարբեր ոլորտներին անդրադարձող ավելի քան հարյուր գիրք: Դրանք ներառում են նաեւ տասնհինգ հատոր (յուրաքանչյուրը մինչեւ ութ հարյուր էջ) Նոր Կտակարանի մեկնություն: Ավելի վաղ գրել է աշխատություններ աղոթքի, ղպտի վանականության, Հաղորդության եւ Ս. Պատարագի, Սուրբ Հոգու, Իսրայելի պատմության, մարդու արարման, Քրիստոսի կյանքի վերաբերյալ: Նրա աշխատությունները ներառում են նաեւ հասարակական խնդիրներին վերաբերող թեմաներ, ինչպես օրինակ՝ կնոջ իրավունքները եւ պարտականությունները, Եկեղեցին եւ քաղաքականությունը եւ այլն:

Հայր Մաթան առանձնակի անդրադառնում է Մարդեղացման խորհրդին, աղոթքին, Հաղորդությանը:

Արեւելյան Եկեղեցիների հայրերին, հատկապես Աթանաս Մեծին (328-373 թթ.) եւ Կյուրեղ Ալեքսանդրացուն (412-444 թթ.) համակարծիք՝ Հայր Մաթայի համար Քրիստոսի մարդեղացումն իրողություն է, որը հաշտեցնում է երկինքն ու երկիրը: Մարդեղացման միջոցով մարդը փրկագործության պատմության մեջ իր կյանքը վերափոխելու կարողություն է ձեռք բերում: Քրիստոսի մարդեղացմամբ սրբագործվում են նյութեղեն եւ անցողիկ բոլոր արարածները: Մարդեղացումը սուրբ խորհուրդ է, որի հիմքը հավատն է առ մարդեղացած Աստծո Որդին: Մարդեղացման բնական հետեւանքը, համաձայն հայր Մաթայի, ճգնակեցությունն է: Եկեղեցին միայն քրիստոնյաների համայնք չէ, այլ միություն, որին կարելի է հասնել միայն զղջումի, խոնարհության, սիրո, ողորմածության միջոցով:

Աղոթքը, ըստ Հայր Մաթայի, ապրում եւ գործում է մարդու ներսում՝ նրան նախապատրաստելով հավիտենական կյանքի՝ Աստծո կողքին ապրելու համար: Այն կենարար ուժ է, որ վերափոխում է մարդու ողջ էությունը: Հայր Մաթան

քննում է աղոթական տարբեր դրսեւորումները՝ բնական մտահայումից մինչեւ գերբնական ու հոգեւոր:

Եկեղեցական հայրը ներկայացնում է նաեւ իր փորձառությունը՝ խոստովանելով, որ երբ քաղցը խնդիր է դարձել, նա բավարարվածություն է գտել հոգեւոր հայեցությամբ: Ձմռանը՝ անապատի սաստիկ ցրտի ժամանակ, ջերմություն է գտել աղոթքի միջոցով: Երբ մարդիկ իր հետ դաժան են վարվել, հանգիստ է գտել իր խցում: Հայր Մաթան աղոթքը եւ խոկումն է համարում իր ուտելիքն ու ըմպելիքը, հագուստը եւ զրահը:

Ըստ Հայր Մաթայի՝ մարդն արարվել է Աստծո հետ հաղորդակցվելու համար՝ կատարյալ հաղորդակցությամբ, որը ստանում ենք Սուրբ Հաղորդության միջոցով: Քրիստոսի միջոցով վերականգնվում է Աստծո հետ հաղորդակցության լիությունը: Այդ վերականգնումն իրականանում է ոչ միայն հավատով ու մկրտությամբ, այլ նաեւ Հիսուս Քրիստոսին չարչարակից լինելով, որին հասնում ենք խոնարհությամբ, զղջումով, արտասուքով, տառապանքով, աղոթքով: Իր գրվածքներում Հայր Մաթան մշտապես քարոզում է խոնարհություն, որը առաքինության հիմքն է եւ առաջնորդում է դեպի Աստծո արքայություն:

ՄԱԹԱԼԱ ԱԼ-ՄԻՍՔԻՆ

ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ[5]

ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

«Աստծո արքայություն» բառակապակցության հիմքը եբրայերեն է եւ կարդացվում է «מַלְכוּת הַשָּׁמַיִם» («մալխուԹ հաշամայիմ»), այսինքն՝ երկնքի արքայություն: Սակայն այս եզրի կիրառման նպատակն է ցույց տալ «Աստծո արքայությունը», այսինքն՝ Աստծո ամբողջական գերիշխանությունը մարդու վրա: «Աստված» բառը փոխարինվել է «երկինք»-ով՝ խուսափելով Աստծո սուրբ անունը հիշատակելուց (ըստ հրեական ավանդույթի՝ Աստծո հանդեպ երկյուղածության ու վախի պատճառով): Սա ակնհայտ է Մատթեոսի Ավետարանում, քանի որ վերջինս գրվել է հրեաների համար: Ինչ վերաբերում է մյուս ավետարաններին, դրանցում Աստծո անունը հիշատակվում է առանց արգելքի՝ ոչ թե հնազանդության պակասի պատճառով, այլ մտերմության եւ սիրո առատության համար, որ Աստված, հանձին Հիսուս Փրկչի, ցուցաբերում է հեթանոսների նկատմամբ:

Առաջին անգամ այս եզրը գործածում է Հովհաննես Մկրտիչը, սակայն այն կիրառվում էր մարգարեների կողմից՝ Քրիստոսի գալստյանը նախորդող վերջին դարերում՝ որպես Իսրայելի ու ողջ աշխարհի կյանքին Աստծո անմիջական միջամտության սպասման վախճանաբանական հայտնություն: Եվ ամենն այն ցավալի ձախողումից հետո, որ կրեցին մարգարեները թագավորների, իշխանավորների ու հոգեւորականների արատավոր վարքի պատճառով, այն պատճառով, որ ժողովուրդն անկարող գտնվեց Աստծուն ի սրտե հետեւելու, այն իրողության հաստատման պատճառով, որ մարգարեություններն անօգուտ են եղել մարդկանց զսպելու հարցում:

Մարգարեական գրքերում Աստծո արքայության մասին կանխասացությունները մշտապես կապվում են Մեսիայի գալստյան հետ՝ որպես Անձ, ով կպատրաստվի այդ արքայության համար եւ կբացահայտի այն:

---

[5] دير القديس أنبا مقار , البحيرة , مصر , "ملكوت الله" , متى المسكين , 1982 (**Մաթա ալ-Միսքին**, Աստծո արքայություն, Եգիպտոս, Բուհեյրա, Ս. Մակար Մեծի միաբանություն, 1982):

Ի դեմս Մեսիայի՝ Աստծո արքայության մասին հայտնվել է շատ վաղուց՝ մարգարեների ժամանակաշրջանից, նույնիսկ դրանից առաջ՝ թագավորների ու դատավորների դարաշրջանում. այդ մասին կարդում ենք դեռեւս Հակոբի ժամանակներից՝ իր որդիներին օրհնելիս. «Յուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից, մինչեւ որ գայ նա (եբր.՝ Շիլո - ծանոթ. թարգմ.)[6], ում պատկանում են հանդերձեալները» (Ծննդ. ԽԹ. 10): «Շիլոն» այստեղ «խաղաղության թագավորն է»: Սա է Մեսիայի եւ Նրա արքայության բնույթի առաջին վկայակոչումը:

Մեսիայի վերաբերյալ այս վաղ վկայակոչումից պարզ է դառնում, որ Աստծո՝ Իսրայելի թագավորություն հիմնելու նպատակը Մեսիայի հայտնությունն է եւ խաղաղության թագավորության հաստատումը, որը բավարար կլինի բոլոր ժողովուրդների համար: Բացի այդ՝ սուրբ գրվածքները միաձայն արտահայտում են այս միտքը, եւ դրանցից որեւէ մեկում՝ պատմական թե հոգեւոր, չի բացակայում այս ճշմարտության հաստատումը, ապա եկան մարգարեները, եւ աստվածային լույսը կենարար կերպով սկսեց կենտրոնանալ այս ճշմարտության շուրջ:

Այս ամենը, առանց որեւէ անորոշության, ցույց է տալիս, որ Իսրայելի թագավորության ստեղծումն ի սկզբանե աստվածային հիմք ունի: Եվ հակառակ իրադարձությունների տրամաբանական ու պատմական փուլերի անխախտ հաջորդականությանը՝ Իսրայելը ներկայացնելու որպես մի թագավորություն, որը գոյություն է ունեցել, կործանվել, հարություն է առել եւ բազմիցս անկում է ապրել, ինչպես յուրաքանչյուր թագավորություն, այնուամենայնիվ, նրա հետ կապված դեպքերի նկարագրման եւ պատմական իրադարձությունների հետեւում թաքնված է մի ճշմարտություն, որ ոչ մի դեպքում չի կարելի անտեսել՝ Աստված ինքն է ղեկավարում այդ իրադարձությունները՝ գաղտնի կամ բացահայտ, եւ Նրա ձեռքն է, որ արարում է պատմական ընթացք՝ ինչպես զարգացում, այնպես եւ անկում: Եվ սա տեղի է ունեցել մեկ անգամ ծածուկ՝ վարագուրված, ու բազմիցս՝ բացահայտ՝ մարդկանց աչքի առաջ: Իսրայելի թագավորության սահմանադրությունն ու օրենսդրությունը քննելուց հետո, առանց ջանքերի, պարզ է դառնում նաեւ այս թագավորության տեսակը եւ բնույթը, վերջինիս ակնհայտ տարբերությունը ցանկացած այլ թագավորությունից, որ գոյություն է ունեցել երկրի երեսին: Պատվիրանից՝ «Ես եմ քո Տէր Աստուածը» (Ելք Ի. 2), հոգեւոր օրենքից, որ Աստված

---

[6] Շիլո (եբր.՝ שִׁילֹה կամ שִׁילֹה) թարգմանաբար նշանակում է խաղաղ կամ խաղաղասեր: Հիմնականում գործածվում է Մեսիային բնորոշելու համար:

ինքն է թելադրել ժողովրդին, եւ բարոյական բնույթի այլ օրենքներից, որոնք Աստված դարձրել է Իսրայելի թագավորության սահմանադրությունը, ակներեւ է դառնում, թե ո՛վ է Իսրայելի ճշմարիտ թագավորը, ինչպիսին է այդ թագավորությունը, հետեւաբար՝ որն էր նրա գոյության ու կործանման պատճառը: Պետությունների եւ թագավորությունների պատմության մեջ չլսված ու չգրված է, երբ թագավորության սահմանադրությունը հիմնված է լինում սրբության ու բարեպաշտության վրա, օրենքները կենտրոնացած են լինում մաքրագործման վրա, գործերն ու նպատակները բաղկացած են լինում զոհաբերությունից, եւ որի միակ թագավորը Աստված է լինում:

Սակայն Իսրայելն իրականում ձախողեց, չկարողացավ լինել Աստծո թագավորությունը եւ ցած ընկավ այն դիրքից, որի համար նախատեսված էր. սա տեղի ունեցավ դատավորների, թագավորների, իշխանավորների, հոգեւորականների եւ նույնիսկ ծերերի հոգեւոր անկման պատճառով: Իսրայելի հիմնական խնդիրները մշտապես եւ գլխավորապես եղել են թագավորի արատավորությունը, հոգեւորականի թերությունը, մարգարեի թուլությունը: Բոլոր մարգարեների կանխասացություններն ու տեսիլքները կենտրոնացան թագավորի վրա, որը կունենար այնպիսի հատկանիշներ, որոնք նրան հնարավորություն կտային ամբողջապես եւ բարեպաշտորեն կառավարելու մարդկայինը գերազանցող ուժով՝ մինչ Իսրայելի թագավորությունը կամբողջացներ իր աստվածային բնույթը, որ Աստված կամեցել էր նրա համար, եւ կհասներ այն նպատակին, ինչի համար ստեղծվել էր:

Մարգարեների տեսիլքներում հստակ բացահայտվում է Մեսիայի պատկերը: Եվ այս հոգեւոր, նույնիսկ պատմական համառության ազդեցությամբ մարգարեներն սկսում են բացահայտել Մեսիայի հատկանիշները. «Յեսսէի արմատից գաւազան պիտի ընձիւղուի, ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից: Նրա վրայ պիտի իջնի Աստծու հոգին, իմաստութեան եւ հանճարի հոգին, խորհրդի ու զօրութեան հոգին, գիտութեան եւ աստուածպաշտութեան հոգին. Աստծու երկիւղի հոգին պիտի լցնի այն: Ո՛չ ըստ կարծիքի պիտի դատի նա եւ ո՛չ էլ ըստ խօսքերի յանդիմանի: Նա տնանկի իրաւունքը պիտի պաշտպանի եւ արդարութեամբ պիտի դատի երկրի տառապեալներին. իր բերանի խօսքով հարուածի երկրին եւ իր շուրթերի շնչով ոչնչացնի ամբարիշտներին: Արդարութեամբ պիտի գօտեւորի իր մէջքը եւ ճշմարտութեամբ կապի իր կողերը..... ու նրանք ոչ ոքի չպիտի կարողանան վնասել եւ խայթել իմ սուրբ լեռան վրայ, քանզի ամբողջ երկիրը լցուելու է Տիրոջ գիտութեամբ, նման առատ ջրերին,*

որոնք ծածկում են ծովերը: Այն օրը հեթանոսներն իրենց յոյսը դնելու են Յեսսէի արմատի վրայ, որն իշխան է կանգնելու հեթանոսներին, եւ նրա հանգիստը փառահեղ է լինելու» (Ես. ԺԱ. 1-5, 9-10):

Նոր թագավորի՝ Մեսիայի այս նկարագրությունը լիովին համընկնում է աստվածային այն բնույթին, որ Աստված կամեցավ Իսրայելի թագավորության համար: Այս նկարագրությունն Իսրայելի թագավորության ստեղծման եւ Աստծո՝ նրա հետ կապված նպատակի բացահայտումն է:

Կարելի է նկատել, որ Մեսիայի՝ որպես թագավորի պատկերումը, մարդկային քաղաքական ըմբռնման տեսանկյունից դարձել է այլաբանական, քանի որ պարզ դարձավ՝ այս թագավորի իշխանությունն ընդգրկել է ողջ աշխարհը: Այս թագավորի ուժը նրա «բերանի խոսքն» է, եւ զենքը, որով պատժում է, «շուրթերի շունչն» է, իսկ զորությունը բխում է նրա բարեպաշտությունից ու հավատարմությունից:

Ինչ վերաբերում է այս լայնարձակ թագավորության ժողովրդին, նա հզոր, ուժեղ եւ իմաստուն չէ, այլ՝ թշվառ, եւ թագավորի խնդիրն աշխարհի թշվառների հանդեպ արդար լինելն է:

Թագավորության նոր սահմանադրությունը չի ճկվում օրենքի տառի տակ, եւ բառերն ու արտահայտությունները չեն սահմանափակում այն, այլ Ոգին է, որ առատորեն գիտելիք է հորդում բոլորի վրա՝ ինչպես ծովի ջուրը:

Նա չի գրավում, չի հալածում ազգերին՝ նրանց սրով կամ նիզակով հնազանդեցնելու համար, այլ դեպի իրեն է ձգում, ինչպես ժողովուրդն է ձգվում դեպի փրկարար դրոշը, եւ ազգերը մրցում են միմյանց հետ՝ խնդրելով նրա բարեհաճությունը:

Մարգարեություններից կարող ենք հասկանալ տեսիլքի ճշմարտացիությունը եւ մարգարեների ընկալումը Մեսիայի հոգեւոր ու աստվածային հատկանշների վերաբերյալ, որոնք լիովին ի հայտ եկան Հիսուս Քրիստոսի՝ խաղաղության Թագավորի անձի մեջ, Ով ինքն իր մասին ասաց. *«Գնացէք պատմեցէք Յովհաննէսին, ինչ որ դուք լսեցիք եւ տեսաք. կոյրերը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները՝ մաքրում, խուլերը՝ լսում, մեռելները՝ յառնում, եւ աղքատներին քարոզում է Աւետարանը: Եւ երանի՜ է նրան, ով իմ պատճառով չի գայթակղում» (Մատթ. ԺԱ. 4-6):*

Այստեղ պետք է նկատել, որ իր գործերը ցույց տալուց հետո Քրիստոսի՝ «Եւ երանի՜ է նրան, ով իմ պատճառով չի գայթակղում» խոսքերը նշանակում են, որ Թագավորության եւ իր՝ որպես թագավորի հատկա-

նիշները շարունակում են գաղտնի մնալ, եւ անհրաժեշտ է խորաթափանցություն, ներշնչանք. ավելին՝ Թագավորությունն այս շրջանում դեռեւս սերմի, փոքրիկ խմորիչի նման է:

Այն պահից, երբ հայրերը, մարգարեներն ու ռաբբիներն Իսրայելում սկսեցին խոսել գալիք Թագավորության մասին, պառակտում առաջացավ նաեւ իմաստի եւ մեկնության մեջ: Մոլեռանդ հրեաները կառչում էին երկրից ու սահմաններից, հողատարածքից եւ ոսկուց, մսից ու արյունից, կոչումներից եւ ժառանգությունից՝ Աստծո արքայությունն այս հարթության վրա պատկերացնելով: Նրանք Մեսիային սպասում էին որպես Իսրայելի համար հեթանոսներից վրեժխնդիր լինող թագավորի, որ կընդլայներ իրենց սահմանները, կոչնչացներ թշնամիներին, եւ վերջիններս կստորանային հրեաների ոտքերի առջեւ: Այդ պատճառով Քրիստոսի մեջ չտեսան այն, ինչը Նրան կբնորոշեր որպես իրենց թագավոր, չլսեցին նրա խոսքերում այն, ինչը կհագեցներ նրանց ցանկությունը:

Ծայրահեղության մեջ ընկած նման մոլեռանդներին օգնեցին որոշ մարգարեություններ, որոնք ժամանակային արտահայտություններ էին կիրառում ոչ ժամանակային երեւույթները բացատրելու համար: Մարգարեությունը կարող է ասել, օրինակ, որ հեթանոսները կժառանգեն Իսրայելը, կամ՝ Մեսիան կհնազանդեցնի Իր թշնամիներին՝ առանց ըմբռնելու, որ ժառանգությունն այստեղ հոգեւոր է, իսկ հնազանդությունը սերն ու խոնարհությունն են:

Ինչ վերաբերում է մարգարեությունը հոգեւոր տեսանկյունից ընկալելու նրանց ամոթալի անկարողության պատճառներին, դրանք են.

ա. Արհամարհանք այն իրողության նկատմամբ, որ Աստծո՝ Իսրայելի ժամանակավոր թագավորություն ստեղծելու հիմնական նպատակը Աստծո հավիտենական թագավորության հռչակումն է:

բ. Ճնշումը, ստորացումը եւ դառն ստրկությունը, որին հասել էր Իսրայելն այն մեծ փառքից եւ հզորությունից հետո, որ ունեցել էր, ստիպեց նրանց պահանջել երկրային ու մարմնական ազատություն՝ արհամարհելով հոգու ազատությունը: Քաղաքական բարդ կացությունը, նվաստացումն ու ստրկությունը, որում գոյատեւում էր Իսրայելը վերջին շրջանում, ոչ այլ ինչ էին, քան այլազգիների հանդեպ հնազանդության դրսեւորում:

Քրիստոս աշխարհին ներկայացավ ոսկյա գահին բազմա՞ծ, թե՞ խաչված եւ հաղթված:

Աշխարհը չճանաչեց Քրիստոսին, չընդունեց եւ չհետեւեց Նրան, մինչեւ չմերկացրին ու չխաչեցին. այդպես էլ եղավ Իսրայելի հետ: Եվ երբ վերջինս կործանված ընկավ հեթանոսների ոտքերի տակ, նրա փառքը, հոգեւոր հարստությունը, հայրական ժառանգությունը, աստվածային սահմանադրությունը, գրավոր եւ բարոյական օրենքը տարածվեցին ամբողջ աշխարհում, եւ հեթանոսները ժառանգեցին դրանք որպես անփոխարինելի ռազմավար:

Իսկապես, հնարավոր չէր, որ հեթանոսները ժառանգեին Իսրայելի փառքը, եւ Իսրայելը հանուն հեթանոսների հրաժարվեր իր փառքից, եթե նրա անցողիկ ու ժամանակավոր պատյանը (այսինքն՝ ձեւը որպես ժամանակավոր թագավորություն) չպատռվեր այնպես, որ նրա բնույթը դառնար մոլեգնության պատճառ յուրաքանչյուր ազգի եւ օտարականի համար:

Այսպիսով, հնարավոր չէ ընկալել Քրիստոսին առանց Իսրայելի եւ Իսրայելը՝ առանց Քրիստոսի: Եվ ինչպես Քրիստոս չարչարվեց, ու Նրա մարմինը խաչի վրա բաժանվեց մասերի՝ ճանապարհ հարթելով, որ այն բաժանվի աշխարհի չորս կողմերի միջեւ, այնպես եւ Իսրայելը տրոհվեց. սա մարգարեական ոգով կանխատեսել էր ճշմարիտ մարգարե Զաքարիան. «...նրա մի կէսը պիտի հոսի դէպի առջեւի ծովը, նրա միւս կէսը՝ դէպի յետեւի ծովը... Տէրը թագաւոր պիտի լինի ամբողջ երկրի վրայ» (Զաք. ԺԴ. 8-9): Եվ ինչպես Քրիստոսի կողը խոցվեց, եւ արյունն առատորեն հոսեց յուրաքանչյուրի վրա, այնպես եւ Իսրայելի սիրտը կոտրվեց, «Երուսաղեմի կյանքի հյութը» դուրս հոսեց՝ առատորեն հագեցնելով ծարավը յուրաքանչյուրի, ով ճշմարտություն է փնտրում:

Այժմ ապրում ենք Քրիստոսի խոնարհության թագավորության ժամանակաշրջանում, որը ոչ ոք չի ըմբռնի, բացի հնազանդներից:

Հարսանեկան արարողության մասնակիցներն այժմ զբաղված են հրավիրյալների ոտքերը լվանալով՝ այնպես, ինչպես իրենց Փեսան, Ով եկել էր հիմնելու Իր թագավորությունը երկրի վրա՝ սրբելով արցունքներով, շրջելով որպես օտարական, խնդրելով սամարուհուն՝ ջուր տալ իրեն:

Հպարտանալու առիթ չկա, քանի որ Տիրոջը ճանաչում են որպես ծառա, առաջնորդին ճանաչում են որպես ստրուկ:

Ինչ վերաբերում է առաջինը լինելուն, դրան ոչ ոք չի ձգտում, բացի մերժվածներից:

Անհամբերությամբ սպասում ենք փառքի Թագավորության գալուն եւ Տիրոջ հայտնվելուն՝ ոչ թե հնազանդությամբ, այլ Իր փառքի ու վե-

հության դրսեւորմամբ: Առանց այս փառքի՝ յուրաքանչյուր հայտնություն պատրանք, խաբկանք ու կեղծիք է:

Ընդունված է, որ Իսրայելը չպետք է հագնի իր Փեսայի փառքին գերազանցող ժամանակավոր, հողեղեն եւ քայքայման ենթակա հագուստ, այսինքն՝ երկրային հնացած ժառանգությունն ու քաղաքական հին իշխանությունը, որոնք ձեռք էր բերել զենքով, հրով եւ արյունահեղությամբ:

Իսրայելը պսակվեց Քրիստոսի հետ եւ հագավ փառք՝ ի դեմս այն նահատակների, որոնք էին Իսրայելի բոլոր ցեղերից Տիրոջ աշակերտները, առաքյալներն ու հավատացյալները: Իսրայելն այժմ երկնքում է եւ սպասում է նշանի՝ երկնքից իջնելու՝ որպես զարդարված Հարս՝ իր Փեսայի, սրբերի Եկեղեցու, հրեշտակների ու փառքով պսակված բարեպաշտ հոգիների հետ:

ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարգարեների ոգեկանությամբ տարված բարեպաշտ հրեաների պատկերացումները Մեսիայի մասին մեծապես տարբերվում էին Քրիստոսի ճշմարտությունից, երբ Նա աշխարհ եկավ:

Հրեաները կարծում էին, որ Մեսիան իր ահռելի եւ հրաշագործ ուժը կուղղի Իսրայելի թագավորության կայացմանն ու հզորացմանը, որ վերջինս հասնի իր շոշափելի զորացման գագաթնակետին՝ ինչպես Աստծո արքայությունը, որի նմանը չկա աշխարհում: Մարգարեությունների լույսի ներքո նրանք հավատում էին, որ Մեսիան կփոխի իրերի կարգն աշխարհում եւ ամեն ինչ կստեղծի նորից՝ առավել հզոր ու կայուն, այն իշխանության փոխարեն, որի անզորությունից եւ արատավորությունից հոգնել էին: Հետեւաբար՝ նրանք Մեսիայի թագավորությունը պատկերացնում էին որպես երկրի վրա գոյության կոչվող աստվածային իշխանության դրսեւորումներից բարձրագույնն ու հզորագույնը: Այն պետք է լիներ բոլոր նորոգությունների եւ փոփոխությունների գագաթնակետը, մարդկության աճի ու զարգացման վերջին փուլը:

Հաշվի առնելով այն, որ մարգարեությունները դժվար էր ընկալել որպես Աստծո խոստումների (որոնք բացառապես հոգեւոր են) իրագործում նյութական միջավայրում, ուստի խորհելով եւ ուսումնասիրելով՝ ձեւավորվեց այն տեսակետը, թե այս Թագավորությունն իր փառքով,

հզորությամբ ու արդարությամբ կգերազանցի այն ամենը, ինչ կարող է ծագել մարդու մտքում: Եվ սա՝ համաձայն Մեսիայի գերբնական եւ մարդկային մտքից վեր զորության ու աստվածային գերիշխանության, որով Նա ամեն ինչ անքակտելիորեն միացնում է իրար, որպեսզի ամեն բան լինի Իր բարձրագույն կամքի համաձայն:

Եվ, բնականաբար, բոլոր տեսակետները կենտրոնացան այս Թագավորությունը դեպի ապագա տեղափոխելու վրա: Մարդկային բոլոր հույսերն ու ջանքերն ամփոփվեցին եւ դրվեցին այդ գալիքի մշուշում՝ անորոշ ու երերուն սպասումով՝ ի՞նչ կլինի: Հետեւաբար՝ արդի աշխարհը՝ չարիքներով ու տկարություններով, նրանց աչքերում հակասում էր այն ոսկյա երջանիկ ապագային, որտեղ այս չարիքից ու անկարողությունից այլեւս ոչինչ չէր մնա: Նրանք մերժում էին հայտնությունն այնպիսի Մեսիայի, որ կենթարկվեր օրենքին կամ կչարչարվեր, Ով կկրեր մարդկության մեղքերը, կհառաչեր նրանց հալածանքների պատճառով: Նրանք ոչ մի կերպ չէին կամենում ընդունել, որ աստվածային թագավորությունը կարող էր սերմանվել որպես մանանեխի հատիկ՝ աշխարհի փշերի մեջ եւ քիչ-քիչ ծլարձակել՝ մաքրագործելով արատավոր արարքները:

Այսպիսով, եկավ Քրիստոս, եկավ նաեւ Նրա արքայությունը՝ չարդարացնելով հույսերը հրեաների, ովքեր ակնկալում էին աշխարհիկ փառք Իսրայելի համար եւ պահանջում էին այնպիսի ոգեկանություն, որը կծառայեր ե՛ւ մարդու նպատակներին, ե՛ւ հույսերի իրագործմանը երկրի վրա:

Քրիստոս աշխարհ մտավ գաղտնի եւ աներեւույթ դռնով, որ է՝ «մարդու սիրտը», եւ Թագավորությունն հաստատվեց մարդու ներսում, ոչ թե նրանից դուրս.

1. *«...ահա Աստծու արքայութիւնը ներսում, ձեր մէջ է» (Ղուկ. ԺԷ. 21):*

2. *«Այն ժամանակ եթէ մէկը ձեզ ասի՝ ահա՛ Քրիստոս այստեղ է կամ այնտեղ, չհաւատաք նրան» (Մատթ. ԻԴ. 23):*

Այսպիսով՝ Քրիստոսի գալուստով եւ ճշմարիտ Թագավորության հայտնությամբ քրիստոնեությունն էապես փոխեց մարդկային ըմբռնումն Աստծո արքայության վերաբերյալ.

3. *Տիրոջ թագավորությունն այժմ հոգեւոր, երկնային արքայություն է, որը որեւէ կապ չունի ժամանակավոր իրավիճակների, մարդկային իշխանությունների կամ երկրային տարածքների հետ: Նրա վերերկրային կենտրոնը երկնային Երուսաղեմն է՝ մեր ազատ մայրը, իսկ երկրային*

կենտրոնը՝ Եկեղեցին: Ինչ վերաբերում է երկրային Երուսաղեմին, ապա այն մահացել է որպես մայր:

4. *Այն աստվածային, միստիկ, աներեւույթ եւ թաքնված կառույց է, որը բացահայտվում է միայն հավատավոր սրտերում: Այնուամենայնիվ, կան նաեւ ակներեւ նշաններ:*

5. *Այն պատկանում է ինչպես ներկային, այնպես եւ ապագային, «...դրսից տեսանելի կերպով չի գալիս» (Ղուկ. ԺԷ. 20):*

6. *Այն չի սահմանափակվում որեւէ ժողովրդով, ազգով կամ վարչակարգով, այլ միայն Քրիստոսով, Ով անսահման է: Եվ այսպիսով, այն պատրաստ է իր գիրկն ընդունել յուրաքանչյուր ծունկ, որ երկրպագում է Քրիստոսին, եւ յուրաքանչյուր հոգեւոր արարածի, ով հավատում է Նրան:*

7. *Աստծո արքայությունն աշխարհում հավատացյալների սրտերում է՝ չնայած չարիքի, հանցանքների ու մեղքերի առկայությանը, քանզի հավատն առ Քրիստոս՝ որպես Փրկչի, մեզ ներառում է Նրա արքայություն, միեւնույն ժամանակ բաժանում այն չարիքից, որ աշխարհում է: Փրկությունը, որ Քրիստոս իրագործեց աստվածային արյամբ, կենդանի նոր ճանապարհ է, որ տանում է դեպի Երկնային արքայություն, միեւնույն ժամանակ աստվածային պատնեշ է, որ մեզ բաժանում է չար աշխարհից: Սակայն պայքարը մեր ներսում գտնվող Արքայության ուժերի եւ աշխարհում գտնվող չար ուժերի միջեւ չի դադարի, մինչեւ աշխարհը չդադարի գոյություն ունենալուց: Ավելին՝ չարիքի ծանրությունը եւ ունայնության դեմ պայքարը, որ առկա է ողջ աշխարհում, ընկնում է քրիստոնեության վրա՝ որպես Արքայության ազդարարի ու ջատագովի:*

8. *Ինչպես քրիստոնեությունն է հիմնված ե՛ւ հավատի, ե՛ւ հույսի վրա (հավատը՝ որպես մասնակի փրկություն ներկայում, իսկ հույսը՝ որպես ամբողջական փրկություն նաեւ ապագայում), այնպես եւ երկնային արքայությունը որպես պատվար ունի հավատն ու հույսը: Մեր սրտերում ամուր կապվում ենք մասամբ հայտնված Արքայությանն այն հավատի միջոցով, որ ունենք Քրիստոսի եւ Նրա փրկագործության հանդեպ, այն Արքայությանը, որ ապագայում ամբողջապես հայտնվելու է Քրիստոսի գալստյամբ:*

9. *Այժմ ոչ մի կերպ չենք կարող կատարելապես ուսումնասիրել երկնային արքայությունն ու դրա բնույթը, քանի որ այն ամբողջապես հայտնված չէ, որովհետեւ մինչ օրս կատարյալ չենք հավատի եւ հույսի մեջ, գիտելիքի պակաս ունենք՝ «...շատից քիչը գիտենք» (Ա. Կորնթ. ԺԳ. 12):*

10. *Այնուամենայնիվ, Արքայության ամբողջական հայտնությունը չի իրականանա աստիճանաբար՝ ժամանակային բնական համակարգի զարգացմամբ, եւ ո՛չ էլ մեր զարգացմամբ՝ հավատի, հույսի ու գիտելիքի միջոցով: Այն կբացահայտվի անակնկալ՝ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստյամբ՝ Նրա փառքով եւ «թագավորությամբ»:*

11. *Քրիստոսի մարդեղացումը, այսինքն՝ Նրա առաջին գալուստը մեղքի գերիշխանությունը վերացնելու համար, միջոց էր հավատի ու հույսի միջոցով Աստծո արքայության մասնակի եւ ամբողջական հայտնության համար. այն տեղի կունենա միայն Քրիստոսի երկրորդ գալստյամբ՝ Նրա փառքի միջոցով: Իսկ ինչ վերաբերում է Աստծո արքայության մասնակի հայտնությանը ներկայումս, ապա այն «...ոչ թէ խօսքերով է, այլ՝ զօրութեամբ» (Ա. Կորնթ. Դ. 20), ներքին կյանքի զորությամբ, որ սատարում է մարդուն ներսից՝ Սուրբ Հոգու միջոցով, կյանքի զորությամբ, որ չի դադարում, Աստծո հարության զորությամբ, որը գործում է մեր մարմիններում այս պահից ի վեր:*

12. *Աստծո արքայությունը կապված չէ մարմնական պահանջների հետ՝ ինչպես ուտելը կամ խմելը, «որովհետեւ Աստծու արքայութիւնը ուտելիք եւ ըմպելիք չէ, այլ՝ արդարութիւն եւ խաղաղութիւն եւ խնդութիւն Սուրբ Հոգով» (Հռոմ. ԺԴ. 17): Երբ տիրապետում ենք այս ներքին զորությանը՝ բարեպաշտությանը, խաղաղությանը եւ խնդությանը, այն դառնում է ապացույց, որ արդեն անդամ ենք Աստծո արքայության, որն իրապես սկսել է հայտնվել մեզ: Եվ ինչպես «Աստծու արքայութիւնը ներսում, ձեր մէջ է», այնպես եւ նրա նշանները պետք է լինեն ձեր ներսում:*

Ինչ վերաբերում է Աստծո արքայության ամբողջական հայտնությանը, չգիտենք, թե ինչ է այն՝ մեր գիտելիքի պակասի եւ Քրիստոսի՝ ամբողջ փառքով դեռեւս կատարելապես չհայտնվելու պատճառով: Այնուամենայնիվ, գիտենք, որ միայն Քրիստոսի գալուստով կդառնանք Նրան գործակից այս Թագավորության մեջ. «...եթէ համբերենք, նրա հետ էլ պիտի թագաւորենք...» (Բ. Տիմ. Բ. 12): Զգիտենք՝ որն է Աստծո փառքը, որ հայտնվելու է Քրիստոսի երկրորդ գալստյամբ, այնուամենայնիվ, այս պահից ի վեր կոչված ենք վստահությամբ եւ հույսով ջանալու հասնել համագործակցության՝ նման փառքի մեջ: «Վկայութիւն էինք տալիս, որ դուք ընթանաք Աստծուն արժանի կերպով, որը կանչեց ձեզ իր արքայութեանը եւ փառքին» (Ա. Թես. Բ. 12): Այսպիսով, կոչված ենք հավատով մասնակիորեն համագործակից լինելու Աստծո արքայությանը, եւ բերկրանքն ու ներքին խաղաղությունը կլինեն դրա նշանները:

Այդուհանդերձ, գլխավորապես կոչված ենք ամբողջապես համագործակից լինելու Աստծո գալիք արքայությանը, որ ապագայում է հռչակվելու՝ ջանասիրությամբ եւ հույսով, որ երբեք չի մարում, համբերությամբ՝ մինչեւ վերջին շունչը, տառապանք եւ նեղություն կրելով՝ մինչեւ մահ. «...այնպէս որ մենք ձեզնով պարծենում ենք Աստծու եկեղեցիներում ձեր համբերութեան եւ հաւատի համար՝ ձեր այն բոլոր հալածանքների եւ նեղութիւնների մէջ, որոնց դուք համբերում էք: Դրանք ապացոյց են Աստծու արդար դատաստանի, որպէսզի դուք արժանի լինէք Աստծու արքայութեանը, որի համար էլ նեղութիւն էք կրում» (Բ. Թես. Ա. 4-5):

Ամեն օր ներքուստ պատրաստվում ենք Աստծո արքայությանը մեր գործակցությամբ՝ լինի դա մասնակի (այժմ հավատով՝ հիմնված սիրո վրա), թե ամբողջական (ապագայի հույսով՝ հիմնված ջանքի վրա), որպեսզի անդամակցենք այդ Արքայությանը, որ կընդգրկի հոգեւոր բոլոր արարածներին, որոնց մեզ կկապի ոչ այլ ոք, քան Ինքը՝ Քրիստոս:

Սակայն ինչ էլ անենք՝ լինի դա հավատով՝ հիմնված սիրո վրա, թե հույսով՝ հիմնված ջանքի վրա, այն մեզ հնարավորություն չի տալիս ժառանգելու Աստծո արքայությունը, այլ միայն նախապատրաստում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայտնությանը, երբ գա Իր փառքով: Եվ չենք երկյուղի Նրա հայտնությունից, այլ կկրենք Նրա փառքը: Ինչ վերաբերում է Արքայությանն արժանի եւ համագործակից լինելուն, ապա դա ամբողջացնում է Քրիստոսի հայտնության փառքը՝ «Նրա երկրորդ՝ փառքով լի ահավոր գալստյան»[7] ժամանակ, այդ գալստյան ընդունումը մեր կողմից եւ անկաշկանդ մասնակցությունը դրան. երբ Քրիստոս գա, կհայտնվի Իր արքայության փառքով՝ բոլոր հրեշտակների, հոգեւոր արարածների ու սրբերի հետ՝ կոչելով մեզ՝ մնացածներիս, հայտնվելու Իր հետ միասին:

Թարգմանությունն արաբերենից՝
ՋԱՐՈՒՀԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ

[7] Քաղվածք Ղպտի Եկեղեցու պատարագից: